

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԻԿՈՐ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ ՀԵՏ

Հ. - Արտասահմանեան մատուցում փորձեր եղան Ղարաբաղի հարցի արժարժուճը կապել կրօնական հակասութիւններին: Չե՞ր կարծիքը:

Պ. - Դա պարզապէս յիմարութիւն է, դա դալիս է խնդիրը չճանաչելուց: Բանն այն է, որ սովետական ժամանակաշրջանում հայ ժողովուրդը ձեւաւորուեց որպէս միասնական սոցիալիստական ազգ: Դժբախտաբար, այն բաժանուեց երկու մասին՝ Հայկական ՍՍՀ բնակչութեան եւ Լեւոնային Ղարաբաղի բնակչութեան: Եւ, չնայած այն սարսափելի խոչընդոտներին, որ Ասորի պէյճանի կառավարութիւնը հաստատում էր Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ, գոյութիւն ունեն մշակութային եւ ազգային բանական սերտ կապեր այդ մէկ ազգի երկու հատուածներին միջեւ: Եւ հիմա, երբ երեւոյց այդ խնդիրը լուծելու իրական հնարաւորութիւն, բնական է որ այդ երկու հատուածները ցանկանում են վերամիանալ:

Հետեւապէս, այստեղ առկայ է միայն մէկ խնդիր՝ ազգի միացման խնդիր, եւ վերջ: Հայերը դարերով ապրել են մասնատական պետութիւններում, քիչ թէ շատ բռնակալական պետութիւններում, բայց այնտեղ նրանք չէին լուծուում, ձուլման չէին ենթարկուում, ի տարբերութիւն քրիստոնէական պետութիւնների: Այստեղ էլ գոյութիւն չունի ձուլման սարսափելի կամ ազդային, կրօնական դիմադրի անկման վտանգ: Այստեղ միայն ցեղասպանութեան վտանգն է՝ մեր դարաւոր օճախները լքելու եւ հեռանալու վտանգը: Աշխարհում ոչ մի ազգ չի գիջում իր հողից մէկ մեթր անգամ: Տողը այս մոլորակի ամենաթանկարժէք բանն է: Իսկ մենք Ասորպէյճանական ՍՍՀ տարածքի վրայ ամէն ատանամեակ կորցնում ենք շրջաններ՝ մէկը միւսի յետեւից: Մենք կորցրեցինք Լեւոնային Ծիրվանը, վերջնականապէս կորցրեցինք Գարգիսի մեծադոյն մասը, Ծամբորի շրջանը, Դաշքեսանի շրջանը եւ այլն: Ի՞նչ է մնացել Ղարաբաղից - դա Լեւոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն է, Ծահուսեանի շրջանը եւ Խանլարի շրջանի հարաւային հատուածը, ու վերջ: Եթէ դա էլ կորցնենք, ապա այլեւս երբեք չենք սպացուցի, որ դա մեր հողն է:

Ինչ վերաբերում է Նախիջևանի մարզին, որտեղ սովետական իշխանութեան տարիներին փաստօրէն հայեր չեն մնացել, ստա այնտեղ տեղի ունեցաւ սպիտակ ցեղասպանութիւն, այնտեղ բարբարոսաբար ոչնչացուում են հայ ազգային մշակոյթի յուշարձանները... Եւ դժուար է ասել, արդե՞օք հնարաւոր կը լինի այդ մարզը վերագործնել հայերին, բայց հազիւ թէ Նախիջևանը մշտապէս մնայ Ասորպէյճանի կազմում: Յամենայնդէպս, սովետական հրամանատարութիւնը երբեք չի հաշտուի այն մտքի դետ, որ մօտաւորապէս 300 հազար թուրք բնակուում են իրանի եւ Թուրքիայի սահմանի վրայ:

Հ. - Ինչպէ՞ս եղաւ, որ սկսեալ Նախիջևանից, ատրպէյճանական ղեկավարների արագօրէն հակասում են իրենց իսկ խոստումներին:

Պ. - Թրքական իշխանութիւնները՝ երիտթուրքերը նոյնպէս հայերին խոստացել էին բարեփոխումներ եւ ի՞նչ ասես, բայց այդ բանը չստացուեց: Հայաստանում սովետական իշխանութեան հաստատման օրը հենց այն պահն էր, երբ Ասորպէյճանի ղեկավարութիւնից որոշ քայլեր էին պահանջուում՝ նորաստեղծ հանրապետութեանն ընդառաջ: Նախիջևանի խոստումները հայկական հողերի վերաբերեալ ամբոխավարական էին: Նախիջևանի ղեկավարները, որ այդ ամէնը ժամանակաւոր բընոյթ էր կրում, եւ իրադարձութիւնները ցոյց տուեցին, թէ ինչ հազձեպութեամբ նա հրաժարուեց իր խօսքերից, թէ ինչպէ՞ս նա՝ Ստալինի ու Թուրքերի օգնութեամբ կարողացան յափշտակել ոչ միայն Նախիջևանը, այլ նաեւ Ղարաբաղը: Եւ, ի դէպ, հենց այս օրերը, երբ Ասորպէյճանի ղեկավարութիւնը երդուում է Մոսկուայում, որ պիտի ամէն ինչ անի յօգուտ Ղարաբաղի հայ բնակչութեան՝ ցոյց են տալիս, որ Նախիջևանի այդ ժառանգութիւնը նրանց մօտ աւանդական է դարձել:

Հ. - Վերջերս ձեռքաւորուած է Պարոյր Հայրիկեանը: Նա որեւէ առնչութիւն ունի՞ զարաբաղեան շարժման հետ:

Պ. - Ես նրան ճանաչում եմ, բայց նա երբեք չի մտել դարաբաղեան շարժման մէջ:

Ես կարող եմ ամենայն ճշմարտութեամբ ասել, որ Պարոյր Հայրիկեանի կազմակերպութիւնը դարաբաղեան շարժման մէջ որեւէ դեր չի կատարել եւ չէր կարող կատարել. նրանք չեն ճանաչում ո՛չ այս խնդիրը, ո՛չ էլ՝ այս շարժման նպատակները: Բայց, որքան ես դիտեմ, նրանք ակտիւօրէն ինֆորմացիա էին փոխանցում Արեւմուտք: Ամբողջ այդ խմբից ես ճանաչում եմ միայն Պարոյր Հայրիկեանին: Բաւականին հաճելի մարդ է, խելացի, բայց դժբախտաբար, բռնուած է այդ ցնորական դադափարով՝ Հայաստանի անկախութիւն եւ այլն: Ի՞նչ է նշանակում «Հայաստանի անկախութիւն», ի՞նչ անկախութիւն, ի՞նչ պայմաններում: Եւ նոյնիսկ՝ եթէ պայմաններ լինէին: Ես չեմ կարծում, որ օրինակ Չեխոստոյաքիան աւելի անկախ է, քան Հայկական ՍՍՀ: Սովետական Միութիւնը բաց է անում տնտեսական հսկայական հնարաւորութիւններ, եւ ես, որպէս տնտեսագէտ, կարող եմ ասել, որ եթէ նոյնիսկ պատկերացնենք այդ ենթադրական իրաւիճակը, երբ մենք անջատուեցինք, ապա առաջին ամիսների ընթացքին մենք կը կարողանանք արտադրել ազգային արտադրանքի միայն մէկ հինգերորդ մասը, այսինքն՝ կը սկսուի մասսայական գորգապրկութիւն, ու բառացիօրէն սով կը սկսուի: Դրա հետ պէտք է հաշուի նստել: Եւ շատ արտոս, որ այդ խելացի անձը՝ Հայրիկեանը, զբաղուած է այդպիսի մոլի գադափարով:

Հ. - Ինչպէ՞ս է Կապուկեանը սփիւռքի դերը այս բոլոր գարգացումների կապակցութեամբ:

Պ. - Ես չգիտեմ հայկական սփիւռքի հնարաւորութիւնները: Ինչո՞վ այն կարող է մեզ օգնել՝ չգիտեմ: Բայց կ'օգտէի մէկ այլ բան ասել:

Բանը նրանում է, որ այժմ, սովետական մամուլի այս փրօպագանդայի ազդեցութեամբ, այս անխոհեմ, հրէշաւոր ուրուումների, մեր հասցէին այս արտայայտութիւնների ազդեցութեամբ սփիւռքում կարող է կատարուել ուժերի կողմնորոշման վերանայում: Եւ ոչ միայն սփիւռքում, այլ նաեւ այստեղ, մեզ մօտ: Այժմ մեզ մօտ տեղի է ունեցել Մոսկուայի նկատմամբ նիւիլիզմի արթնացում, անտարբերութիւն: Հսկայական վտանգ

է կայանում այն բանի մէջ, որ Սովետական Հայաստանի ժողովուրդը եւ ընդհանրապէս ամբողջ Սովետական Միութեան ժողովուրդը ինչ որ չափով անցնում է եթէ ոչ հակասովետական այլ՝ անհամերաշխութեան ուղիների վրայ, անհամերաշխութեան պաշտօնական քաղաքականութեան հետ: Եթէ այս քաղաքականութեան արտադրում, ապա տեղի է ունենալու հաստատուած կրօնական սրամարդութիւնների արեւմուտք եւ հակասովետական տրամադրութիւնների արեւմուտք:

Ո՞րն է մեր ուղին: Ինձ թւում է, որ պէտք է հակասովետական կամ հակաուստական դիրքորոշում ընդունել, այլ դիրքորոշութիւնների հիմնական չափանիշը պէտք է լինի ազգային արժանապատուութիւնը: Բաւական է սուղալ այս կամ այն արժանապատուութիւնը մենք դրանից ձանձրացել ենք: Մենք դրանք չենք արժանապատուութիւն: Մեր ազգի դիւաւոր ուղեղիմն է՝ անհատական կամ ընդհանրական արտասահմանի կամ արտասահմանի համար: Եւ, ինձ թւում է, որ պէտք է սփիւռքն էլ դրանից պէտք է ելնի: Ամենադիւաւորը սփիւռքն է մեր միասնութիւնն է, միայն միասնութեամբ կը յաղթի մեր ժողովուրդը: Եւ երբ լսում ես, որ համեմատաբար փոքր հայկական համայնքում գոյութիւն ունեն ինչ որ կուսակցութիւններ, որ հոսանքներ՝ կրօնական, քաղաքական, հասարակական, որ հոսանքներ՝ կրօնական, քաղաքական, հասարակական, այլն, ապա դա ուղղակի ճնշում է, ապշեցնում է: Եկել է մեզ նախը ստեղծելու համընդհանուր ազգային ճակատ: Կարելի է պահպանել սեփական կարծիքները, սեփական քաղաքական մոտեցումները, բայց երբ բախտախաղի վրայ է դրուած ազգային գոյատեւումը, որը ճիշտներում է գտնուում արտասահմանի թուրքիայի եւ սովետական Թուրքիայի՝ Ասորպէյճանի երբ մեզ վրայ թքում են Մոսկուայից, հաշուի չեն նստում մեր իրաւունքների հետ, արհամարհում են մեր ազգային արժանապատուութիւնը, այդ ամէնի հետ մէկտեղ մեզ ոչ մի այլ բան մնում, միայն՝ միանալ:

Ես դարաբաղեան շարժման անունից, մեր հարիւրաւորներին անունից կոչ եմ անում սփիւռքի հայ համայնքների. մոռացէ՛ք գժտութիւնները, երկպառակութիւնները, բոլոր հայերը միացէ՛ք:

Հայերի պէս մի ժողովուրդ իր միասնութեամբ վտանգուած է իւրաքանչիւր պետութեան համար: Վերականուցման ժամանակաշրջանում ոչ մի այլ տեղ յեղափոխութիւն տեղի չունեցաւ, այլ՝ միայն Հայաստանում եւ Ղարաբաղում: Մենք բոստանների ժողովուրդ ենք, յեղափոխականների ժողովուրդ ենք, երազողների ժողովուրդ ենք եւ այդ է մեր դժբախտութիւնը: Երբ մենք միմեանցից մեկուսացուած էինք, վտանգ չէին տեսնում մեր մէջ, բայց երբ միաւորուեցինք, դարձանք իրաւասարսփելի վտանգ մեր երկրի կուսակցութեան բիւրոկրատիայի համար: Այդ բիւրոկրատիան հասկացաւ, որ նրանք, ովքեր քարում են վերականուցման համար, կարող են, մեզ վրայ լինուելով, հասնել յաղթանակի:

Այժմ երեւանում զորքեր են մտցուած, եւ դա պարզապէս զրգուցիկ է: Մարտի 21-ին բարոյականութեան բոլոր սկզբունքները ռանհարելով, երեւանի վրայով երկու անգամ թռան աստիճանակ ուղղաթիւններ՝ ցածր ձեռաւորութեան վրայ: Ես պատկերացնում եմ, օրինակ, մոսկովացիների, լենինկրատցիների քիչ քանակի վիճակը, եթէ նրանց քաղաքների վրայով այդպէս որոնային ուղղաթիւնները: Մեր ժողովուրդը, հրապարակուած կարծիքով մարդիկ ցնիլկարար ծախահարում էր այդ ուղղաթիւններին:

Անս հիմա ամբողջ քաղաքը պաշարուած է, իսկ մեր ժողովուրդն այդ զորքեր թշնամի չի համարում: Դրանում է ժողովուրդի մեծ ուժը: Հայաստանում մէկ շարաթից աւել զանազան օրեւէ բանակ բարոյալքուած է, որովհետեւ տեսնում ենք իրաւաւ իրաւորութիւնը, այս քաղաքակիրթ ժողովուրդը, զիտ զեղեցիկ քաղաքը... Եւ այս գինուորները՝ այս 19-րդ դարեկան տղաները, որոնց, այստեղ բերելով, ասել էին, որ հայերը ուզում են անջատուել Սովետական Միութիւնից, որպէս զապէս ապշած են: Նրանք բարոյալքուած են, եւ երեւանում մի շարաթից աւելի գտնուողներին արդէն այստեղից հեռացնել պէտք է:

Ինչ վերաբերում է մեր գործունէութեանը, ապա ես կ'զրում եմ շօշափել այդ գործունէութեան այն մասը, որուն կարելի էին մասնակցել սփիւռքահայերը:

Այսօր առաջացել է Մոսկուայի ղեկավարների կողմից Լեւոնային Ղարաբաղում տեղաւորելու խնդիրը: Այժմ Լեւոնային Ղարաբաղում գտնուում են 1200 հայ սուսկայիթցիներ: Նրանք ծագումով հիմնականում զարաբաղցիներ են, նրանք չեն շատերը ծնուել են Ղարաբաղում եւ վերջերս են հեռացել այդ տեղից՝ 15-20 տարիներ առաջ: Նրանք մեծ հաճոյքով ընդունութիւն են հաստատում Լեւոնային Ղարաբաղում, նոյնիսկ պայմանով, որ այն առայժմ Ասորպէյճանական ՍՍՀում է: Պէտք է ասել, որ մարզի ղեկավարութիւնը մեծ հողատարութիւն ցուցաբերել նրանց նկատմամբ, Ստեփանակերտի քաղաքում սուսկայիթցիներին է յատկացրել բոլոր նորակառոյց տները: Արեւում է ամէն ինչ՝ զաղթականներին աշխատանքի տեղաւորելու համար: Նախկին «Ղարաբաղ» կոմիտէի ֆոնատից նրանց փոխանցում է զրամ՝ 50-65ական ռուբլի, նայած բնասնիքի փին:

Այս օրերին մեր առաջնահերթ խնդիրն է այդ մարզում տեղաւորել, այսինքն՝ մարզում հայկական էրմիկական տարածման արագացումը: Այդ կապակցութեամբ ցանկալի է որ սփիւռքի հայերը կարծիք Խաչի կամ գոյութիւն ունեցող այլ կազմակերպութիւնների միջոցով կապուեն սովետական կառավարութեան հետ եւ օգնութիւն առաջարկեն: Այդ օգնութիւնը կարելի է բազմաթիւ ոչ թէ դրամի փոխանցումով, այլ, օրինակ՝ ֆիւնդի կամ տնակների (Մոսկուայի հում) մատակարարմամբ: Ես վստահ չեմ, որ Լեւոնային Ղարաբաղում այդ տնակները կը բաշխուեն արագ արագ: Այժմ շինարարութեան համար հողարափներ են առաջարկուած, բայց դժբախտաբար, ոչ շինանիւթեր կան, ոչ էլ ջրհանքեր՝ այնտեղ տներ կառուցելու համար: Եւ եթէ սփիւռքի հայերը կարողանային ուղարկել, օրինակ 100-200 այդպիսի տնակներ՝ դա շօշափելի օգնութիւն կը լինէր: